# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ԻՆՉ ԱՆԵԼ գիտագործնական սեմինարների շարքի ս.թ. մարտին նախատեսվող *ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ* թեմայով հաջորդ փուլի համար հայտարարում է մրցույթ: Հաղթած աշխատության հեղինակը կստանա **200,000 հզ դրամ**, իսկ երկրորդ լավագույն արդյունքը հաղթած աշխատանքի հետ մեկտեղ կտպագրվի ՀԱԳՄ և Անտարես հրատարակչության կողմից հրապարակվող հերթական ժողովածուում:

# ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

## ԹԵՄԱ: Կապիտալի շուկայի զարգացումը ՀՀ-ում՝ ներդրողների պաշտպանություն

### 1. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ-ում կապիտալի շուկայն, ի տարբերություն բանկային շուկայի, չունի զարգացվածության այն աստիճանը, որ հնարավորություն ընձեռի առանց ֆինանսական միջնորդների էական գումարներ ներգրավել իրական հատված, դրանով էապես մեծացնելով ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը՝ հատկապես միջին ձեռնարկությունների համար: Շուկայի թերզարգացվածության պատճառով (օրինակ, արտահայտված ցուցակված ընկերությունների սակավությամբ) նան նվազում է ՀՀ տնտեսության մրցացային միջավայրի գնահատականը:

### 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ավելի հացեական և թիրախային դարձնել իրական հատվածի կարգավորումները, որոնք թողարկման ներուժ ունեցող ընկերությունների համար մատչելի և գրավիչ կդարձնեն ազատ կերպով շրջանառվող արժեթղթերով բաժնետիրական ընկերությունների ձևավորումն ու գործունեությունը:

### 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության շրջանակներում ներդրողներ ներգրավելու տեսակետից անհրաժեշտ է գնահատել՝

1) փոքր բաժնետերերի պաշտպանության ինստիտուտների և օրենսդրության վիճակը, և
2) սնանկության օրենսդրական և ինստիտուցինալ կարգավորումները:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## Ակնկալվող արդյունքը

### Առաջադրանք 1. Փոքր բաժնետերերի պաշտպանություն

Պետք է գնահատել, արդյոք

1) փոքր բաժնետերերի պաշտպանության օրենսդրության համադրելիությունը միջազգային լավագույն փորձի հետ, այդ թվում հատկապես ուշադրություն դարձնելով այն երկրների վրա որոնք ունեցել են ըստ էության բացակայող կապիտալի շուկայի կայացման և խրախուսման խնդիր,
2) Առկա վարչարարության ունակությունը լավագույն լուծումների իրագործման համար:

### Առաջադրանք 2. Սնանկության կարգավորում

Պետք է գնահատել, արդյոք առկա սնանկության օրենսդրությունը՝

1) Ապահովում է հավասարակշռություն ներդրողների և այլ շահառուների (պարտատերեր, անձնակազմ և այլն) պահանջների տեսակետից, ՀՀ-ում առկա կարգավորումները:
2) Տրամաբանորեն համադրելի է միջազգային լավագույն փորձի հետ, այդ թվում հատկապես ուշադրություն դարձնելով այն երկրների վրա որոնք ունեցել են ըստ էության բացակայող կապիտալի շուկայի կայացման և խրախուսման խնդիր:
3) Արդյոք առկա իրավակիրառ պրակտիկան հնարավորություն է տալիս լավագույն կարգավորումներն արդյունավետորեն կիրառելու:

## 4. ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկալի է որ հետազոտությունը պարունակի ոչ միայն ակադեմիական գրականության ամփոփում, օրենսդրության և երկրորդային տվյալների վերլուծություն, այլ և պարունակի գործարարների հետ շփման արդյունքում ձևավորված հարցադրումներ: ՀԱԳՄ-ն կարող է աջակցել հանդիպումների կազմակերպման առումով: Հետազոտության տևողությունը 1 ամիս է:

## 5. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Ովքեր կարող են դիմել**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Դիմողը դիմելու պահին և հետազոտության իրականացման ընթացքում պետք է լինի հայաստանյան ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս կամ գիտաշխատող:

**Հաղթողի ընտրությունը**

Մրցույթի հաղթողն ընտրվում է ՀԱԳՄ և համագործակցող գիտնականների կողմից կազմակերպվող մրցակցային գործընթացի միջոցով: